ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻՆ

Հոկտեմբերի 30-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ հանդիսություն՝ նվիրված Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական Պատվիրակ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանի քահանայական ձեռնադրության 50-ամյակին: Հանդիսությանը ներկա էին այս օրերին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գտնվող թեմական առաջնորդներ, ինչպես նաև Հայաստանի գիտական տարբեր հաստատությունների ներկայացուցիչներ:

1953 թ. ավարտելով Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսարանի դպրեվանքը՝ Մեսրոպ Սրբազանը ձեռնադրվել է կուսակրոն քահանա: Հոգևոր ծառայությանը զուգահեռ Սրբազան Հայրն այս բոլոր տարիների ընթացքում զբաղվում է նաև գիտական գործունեությամբ: Մեսրոպ Սրբազանը բազմաթիվ կրոնական դասագրքերի և ուսումնասիրությունների հեղինակ է: Ուշագրավ են նրա՝ Ստեփանոս Սյունեցուն, Սեբեոսին և Վանանդեցուն նվիրված ուսումնասիրությունները: 1982 թվականից ի վեր Մեսրոպ Սրբազանը հայոց պատմություն և գրաբար է դասավանդում նաև Վիեննայի Բյուզանդագիտական համալսարանում:

Հանդիսության նախաձեռնողները՝ ակադեմիական ինստիտուտների գիտնականներ Պարույր Մուրադյանը, Բաբկեն Հարությունյանը, Պավել Չոբանյանը և Գևորգ Տեր-Վարդանյանը, ըստ արժանվույն գնահատեցին Մեսրոպ Սրբազանի ներդրումը հայագիտության ասպարեզում: Գիտնականները յուրօրինակ նվեր մատուցեցին գիտնական Սրբազանին՝ ներկայացնելով արժեքավոր զեկուցումներ հայ ժողովրդի ու Եկեղեցու պատմությունից:

Հանդիսության ավարտին Մեսրոպ Սրբազանի՝ նվիրյալ հոգևորականի ու գիտության մշակի գործունեությունը բարձր գնահատեց և Վեհափառ Հայրապետը:

Ամենայն Հայոց Հայրապետի սրբատառ կոնդակով Մեսրոպ Սրբազանը վերջերս պարգևատրվել է Հայ Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով (տե՛ս էջ 28):

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ ՍՐԲԱԶԱՆԻ ԵՎ ԱՎՍՏՐԻԱՅԻ
ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՏԵՆԱՊԵՏ ԳԵՎՈՐԳ ԱՆՏՈՆՅԱՆԻ ՀԵՏ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՄՈՍԿՎԱ ԱՅՑԵԼԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ ԴԻՊԼՈՄԱՏԻԿ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՌԹԻՎ